Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ազնիվ Բալասանյանի անվան Կոռնիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվար ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստ
աթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխա-տանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճե-նը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀում
աշխատելու իրավունքը հավաստող փաստա-
թուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ
զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտ
ական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկա-
յության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում
՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմա-
տում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի
ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի
ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են դեկտեմբերի 18-ից մինչև 2023թ. դեկտեմբերի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա `2024թ.-ի հունվարի 9-ին ,ժամը՝ 14:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Կոռնիձորի Ազնիվ Բալասանյանի անվան միջնակարգ դպրոցում,
հասցեն՝ Տեղ համայնք, գ. Կոռնիձոր:

Տեղեկությունների համար զանգահարել՝
(077) 78-84-99 հեռախոսահամարով: